

«ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բ. Գ. Ք. Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎՊՄԻ հայոց լեզվի ամբիոնի դասախոս

Դասընթացի նպատակն է ուսանողների բառապաշարի զարգացումը և հարստացումը:

Բանասիրական ֆակուլտետում ուսանողները բառապաշարի, նրա ճյուղերի, շերտերի, դասակարգման մասին իմանում են առաջին կուրսում դասախոսություններից և տեսական գրականությունից: Գործնական սահմանափակ թվով դասերի ընթացքում ուսանողները կատարում են միայն մի քանի բառարանային աշխատանքներ:

Ուսանողների բառապաշարը ավելի հարուստ, գրագետ և զեղեցիկ կլիներ, եթե բառապաշարի հարստացմանը գիտական մոտեցում ցուցաբերվեր հատկապես լեզու-գրականություն միջգիտական կապով:

Յուրաքանչյուր ժամանակաշրջան անցնելով՝ ուսանողը պետք է իմանա այդ ժամանակաշրջանի լեզվաոճական առանձնահատկությունները, հեղինակային նորաբանությունները, պետք է տիրապետի դրանց պատմական զարգացմանը, և ոչ թե իմաստափոխության մասին խոսելիս պիտի մշվեն արդեն հայտնի բառերը, այլ որպես օրինակ պետք է բերվեն նորանոր բառեր, դարձվածներ: Նման դասերի ընթացքում ուսանողը, ինչպես նաև դասախոսը ամեն պահի կարող են իրենց համար նորանոր բացահայտումներ անել ու դասը դարձնել կենդանի և հետաքրքիր:

Այս դեպքում իբրև ժամանակակից մեթոդ՝ կարելի է կիրառել հանկարծաստեղծումը (ինպրովիզացիա)¹, որը մանկավարժական ստեղծագործության մասնավոր տեսակ է և ուսանողների մոտ զարգացնում է անսպասելի մանկավարժական լուծումներ կատարելու ունակությունը: Հանկարծաստեղծման գործընթացի 4 փուլերի ժամանակ բառարանների երկար ուսումնասիրությունից հետո պարզ է դառնում, որ այնքան հանրահայտ բառեր ստեղծվել են այս կամ այն հեղինակի մոտ՝ արդեն հայտնի կամ բոլորովին տարբեր իմաստներով: Ինչպես **բարեհռչակել** (526)², **լուսաբանել** (255), **պարզևատրել** (494) և շատ այլ բառեր, առաջին անգամ հանդիպելով Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի մեջ, համարվում են հեղինակային նորաբանություններ:

Երկրորդ փուլում ուսանողը, իմաստավորելով իրադրությունը, հետաքրքրվում

¹ Е. Ильин, Психология творчества, креативности, одаренности, Питер; СПб, 2009.- с. 21-448.

² Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 1985:

է, թե այդ բառը ուրիշ որ հեղինակի երկերում է կիրառվել, ինչ իմաստներ է ձեռք բերել գեղարվեստական և հրապարակախոսական, գիտական ոճերում, ինչպես է հանդես եկել տվյալ երկի բնագրային մայրենի և օտար լեզուներով թարգմանություններում, ինչ հոմանիշներ, հականիշներ և տարբերակներ ունի գրական լեզվում:

Իբրև օրինակ՝ շարունակենք քննարկել **բարեհոշակել**, **լուսաբանել**, **պարզևատրել** ներգործական սեռի բայ-նորաբանությունները, որոնք կիրառվել են «Բարեհամբաւել» (ՆՅԲ, 1, 452)¹, «Լուսաւոր բանիւ յայտնել, յայտնաբանել, պայծառ ծանուցանել» (ՆՅԲ, 1, 896), «Տալ պարգեսս, պարգեսել, շնորհել, առատածեռնել» (ՆՅԲ, 2, 632) իմաստներով «Եւ զշնորհ նորին առ ամենեսին **բարեհոշակենմ**» (526), «... գոր հանդերձելոցն ճառից **լուսաբանեն** կերպաւորութիւնք» (255), «Օծումն կենաց **պարգեստրեսցես** քո աղաչողիս» (494) արտահայտություններում: Արդի հայերենում նշված բայերը, համապատասխան սեռային ածանցով ունեն մաս կրավորական սեռի նշանակություն: **Պարզևատրել** և **լուսաբանել** նորաբանությունները գրական հայերենի համար վաղուց ի վեր սովորական են դարձել և ավելի հաճախ գործածվում են հրապարակախոսական, քննադատական լեզվաոճերում, ինչպես՝ սովորական է **պարզևատրել** անորոշ դերբայի կիրառությունը համապատասխան հրամանագրերում, որը հեշտությամբ փոխակերպվում է կրավորական սեռի, կամ «Մովսես Խորենացին իրեն մատչելի բոլոր միջոցներով ջանացել է **լուսաբանել** հայ ժողովրդի ծագման և հետագա զարգացման հարցերը» (ԱԻ, 4, 194)²: «Կ**լուսաբանվեր** «Քառսը», մարդը մարդու մեջ կտեսներ իրեն» (ՎՓ, 4, 6)³: «Հայտնի է, որ մեր մեջ որևէ խնդիր մը **լուսաբանելու** համար երբ վիճաբանություն մը բացվի...» (ՀՊ, 298)⁴: Պարույր Սևակը այս նորաբանությունից գոյական է կերտել, ինչպես՝ «Իմ արմատաշատ բացատրումն է Եւ իմ ճյուղառատ **լուսաբանումը**» (ՊՍ, 1, 457)⁵, իսկ Յ.Շիրազը **պարզևատրել** նորաբանությունը կիրառել է երգիծանքի գեղարվեստական պատկերավորման մեջ. «Գերման կույր խիղճը որպես դժոխքի դ քուրմ Ախերոնին՝ **Պարզևատրե՞ց** շքանշանով նավազ քարոնին» (ՀՇ, Հ. դ., 55)⁶:

Բնագրային թարգմանություններում նշված նորաբանություններից **բարեհոշակենմ** բառը տարբեր եղանակներով է արտահայտվել, չնայած պահպանվել է ժամանակակից հայերենի բառապաշարում: **Բարեհոշակեալ** անցյալ դերբայը մասնատելով՝ թարգմանիչ հեղինակները այն ներկայացրել են տարբեր բառակա-

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979, հ. 2, Երևան, 1981. այսուհետ՝ ՆՅԲ 1/2:

² Տես *Ավետիք Իսահակյան*, հ. 4, Երևան, 1959:

³ Տես *Վահրամ Փափազյան*, հ. 4, Երևան, 1983:

⁴ Տես *Հակոբ Պարոնյան*, Անհայտ էջեր և աֆորիզմներ, Երևան, 1964:

⁵ Տես *Պարույր Սևակ*, հ. 1, Երևան, 1972:

⁶ Տես *Հովհաննես Շիրազ*, Հայոց դանթեականը, Երևան, 1991:

պակցություններով: Ինչպես՝ Մ. Խերանյանը¹ և Գ. Եպ. Խաչատրյանը², պահպանելով հանգուցային սերող հիմքը՝ **բարի** արմատը³, ներկայացրել են մի ամբողջ բարդությամբ, հմմտ. «**Քարեհռչակեալ**՝ լուսաւորեսցին» (279) - «...**բարեբանվելով՝ Պիտի պսակվի**» (Մ.Խ., 37) և «...ամեն ժամանակ բարեբանուելով՝ Պիտի պսակվի» (Բ. Ա. 21), իսկ Վ. Գևորգյանը⁴ սերող հիմքի իմաստը չի պահպանել և նորաբանությունը ներկայացրել է բոլորովին այլ մոտեցումով, ինչպես՝ «**Ցուցադրվելով պիտի հռչակվի**» (Վ.Գ., 56): Նույն նորաբանությունը՝ արդեն իբրև դիմավոր բայ, հանդիպում է նաև Դ զլխում. «Եւ զշնորհ նորին առ ամենեսին **բարեհռչակեն**...» (526): Մ. Խերանյանը նորաբանությունը պահպանել է նույնությամբ՝ կատարելով միայն բառացի թարգմանություն, ինչպես՝ «Եվ նրա շնորհն են բարեհռչակում բոլորին» (304): Գ. Եպ. Խաչատրյանը, նորաբանության բաղադրիչները տրոհելով, այն ներկայացրել է այլ տարբերակով, հմմտ. «Եւ ամենուն **կ'համբաւեն** անոր շնորհը՝ **զովեստով**» (179):

Այստեղ կարելի է կատարել նաև նորաբանության բաղադրիչների իմաստային քննություն, պարզել, թե ինչ իմաստներով են կիրառվել բաղադրիչ բառերը պատմության տարբեր ժամանակաշրջաններում, և ինչ իմաստով է կիրառել տվյալ հեղինակը այդ արմատը, ածանցը, ինչ հետաքրքիր զուգորդություններ կան և այլն: Ինչպես՝ **փայլունակ** (336) նորաբանությունը Գ. Նարեկացին կերտել է «վերջածանցավոր բառ + ածանց» բառակազմական կաղապարով՝ «Փայլուն՝ իբր նուազական» (ՆԴԲ, 2, 930) իմաստով: Արդի գրական լեզվում բառը որպես բարդություն է գիտակցվում (արմատ + վերջածանցավոր բառ)՝ «Փայլելու հատկություն ունեցող» (ԺՂԲԲ, 4, 632)⁵ իմաստով:

Թալկացուցիչ նորաբանությունը իմաստային նեղացման է ենթարկվել բառաբաղադրիչների իմաստափոխության հետևանքով. իբրև **հեծութիւն** (618) գոյականի որոշիչ՝ նշանակում է «Որ տայ թալկանալ կան **թալ-թալ խաղայ**» (791). Ժամանակակից հայերենում բայական ընդգծված վերլուծական տարբերակի իմաստները՝ «Թալանալով շարժիլ, այսր-անդր տատանիլ, ի նուաղման, յասահատութենէ, ի լուսնոտութենէ» (ՆԴԲ, 1, 791) չեն պահպանվել:

Ստուերային նորաբանությունը Գ. Նարեկացին կիրառել է փոխաբերական

¹ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Գրաբարից թարգմանեց Սկրտիչ Խերանյան, Երևան, 1960, այսուհետ՝ Մ. Խ.:

² Մատեան ողբերգութեան, սուրբ Գրիգոր Նարեկացի, Բուենոս-Այրես, 1948, այսուհետ՝ Բ. Ա.:

³ Տես *Լ. Պետրոսյան*, Գրիգոր Նարեկացու «Մատեան»-ի բառային նորաբանությունները, ատենախոսություն, 2010, էջ 88:

⁴ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Թարգմանություն Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979, այսուհետ՝ Վ. Գ.:

⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1, Երևան, 1969, հ.2, Երևան, 1972, հ.3, Երևան, 1974, հ.4, Երևան, 1980. այսուհետ՝ ԺՂԲԲ:

«Սեպհական կամ ստուերի, ստուերակերպ, ուրուական, նսեն, աղոտ» (ՆՅԲ, 1, 754) իմաստներով՝ «Անմահն առ մահկանացուս, լոյսն ահաւոր առ **ստուերայինս**» (457): Արդի հայերենում շատ սովորական են բառի «1. Արգելված, գաղտնի, չհարկված: 2. Ապօրինի ճանապարհով ստացված» իմաստները (ԱՅՆԲ 426)¹ **ստուերային** տնտեսություն, **ստուերային** գործունեություն և նմանատիպ այլ բառակապակցությունների շրջանակներում: Վերջինս, սակայն, ռուսերենի համապատասխան կառույցի պատճենումն է: Ե. Չարենցը պահպանել է բառի նախնական նշանակությունը՝ «Մարդիկ պարզապես քարշ են տալիս **ստուերային** խղճուկ մի գոյություն» (ԺՅԼԲԲ, 4, 336):

3-րդ փուլում արդեն հայտնի գաղափարները պետք է հանրայնացնան, ուսանողները կարող են իրենց եզրակացությունները փոխանակել միմյանց հետ, կատարել հետաքրքիր հետևություններ: Դասի այս մասում անպայման կլինեն նաև սխալ հետևություններ, որոնք պետք է մանրամասն քննվեն ու ճշտվեն դասախոսի և ուսանողների կողմից:

Աշխատանքի վերջում կիրազործվի մեթոդի 4-րդ փուլը՝ իմաստավորում. տրված թեմայի շուրջ կարելի է ներկայացնել ռեֆերատ, հոդված և այլն:

Նույն աշխատանքը կարող են կատարել նաև արտասահմանյան գրականության դասերին: Ուսումնասիրելով հեղինակների թարգմանական արվեստը՝ կարելի է պարզել, թե որ կազմությունն է հեղինակային, և ինչ արտահայտություններ են դրանք գտել թարգմանված երկերում, այսպիսով ուսանողներն իրենք կարող են առաջադրել իրենց տեսակետները թարգմանված բառի, արտահայտության վերաբերյալ:

Նորաբանությունների ուսումնասիրությունը կարելի է կատարել նաև լեզուների համեմատության մեթոդով: Ինչպես՝ Գ. Նարեակցու նորաբանություններից շատերը իրենց հունարեն և լատիներեն համարժեքներն ունեն, ինչպես՝ **շրջադրութիւն** նորաբանությունը «Circumpositio, circumdatio» (ՆՅԲ, 2, 496). մեկնաբանել նոր օրինակներ:

Կան հեղինակային նորաբանություններ, որոնք համարժեքներ ունեն բարբառներում, ինչպես՝ **հանճարագրաւ** – անխելք, խելքը պակաս (ՆՅԲ, 2, 46), **մատոնամուխ** – մատ խօթելով, փարմագ, սօգարագ (ՆՅԲ, 2, 215), յեսանեմ – պիլեմէք (ՆՅԲ, 2, 355), յիմարարար – խենդեցնօղ (ՆՅԲ, 2, 359), յլովամեղծ – իսլի, փիս (ՆՅԲ, 2, 369):

Կան նորաբանություններ էլ, որոնք և՛ բարբառային, և՛ օտարալեզու համարժեքներ ունեն, ինչպես՝ **մեծագնութիւն** բառը

¹ Սեդա Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002, այսուհետ՝ ԱՅՆԲ:

«Նորաբանությունները հայերենում» դասընթացը կազմված է 45 դասախոսությունից և 12 գործնական պարապմունքներից:

Դասախոսություններին նպատակահարմար ենք գտնում ուսանողներին ներկայացնել նորաբանության էությունը և նրա մասին կատարված ուսումնասիրությունները ինչպես հայ միջնադարյան, այնպես էլ ժամանակակից լեզվաբանության պատմության մեջ՝ անդրադառնալով նաև օտարազգի հեղինակների տեսակետներին և դասակարգումներին:

Խոսքը ավելի կենդանի ու հասկանալի դարձնելու համար պետք է գործածել ամերիկացի մանկավարժ Ռաֆայելի¹ առաջադրած ռազմավարությունը, ըստ որի՝ ուսանողները դասախոսության ժամերին առաջադրված խնդրի էությունը հարցերը վերլուծելով պետք է հասկանան:

Դասախոսության ժամերին առաջադրվող հարցերը ըստ էության երկու կարգի են.

- Հարցեր, որոնց պատասխանները զարգացման կարիք ունեն՝ հիմնվելով ընթերցողի մտքերի և փորձառությունների վրա:
- Հարցեր, որոնց պատասխանները պետք է փնտրել տեքստում:

Նորաբանությունների մասին առաջադրվող հարցերը տրվում են թե մասնագիտական, թե գեղարվեստական գրականությունից: Դրանց պատասխանները ուսանողները պիտք է գտնեն դասից հետո՝ օգտվելով համապատասխան հանձնարարված գրականությունից:

1960-ական թթ. բառագիտության մեջ առանձնացվեց մի նոր ոլորտ, որը կոչվեց *неология* (նորաբանագիտություն)²՝ գիտություն նորաբանությունների մասին:

Լեզուն՝ իբրև բարդ, շարունակ փոփոխվող համակարգ, անընդհատ զարգանում, կատարելագործվում, համալրվում է նոր միավորներով՝ ձեռք բերելով իր անցյալը, ներկան ու ապագան: Այսպիսով՝ լեզվի համակարգում ամենից փոփոխվող բառապաշարն է: Հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխությունների հետևանքով լեզվում շարունակ կատարվում է «համալրում» և «բեռնաթափում»: Այսպիսով՝ առաջանում են նորաբանություններ և հնաբանություններ, որոնք բառապաշարի զարգացումը պայմանավորող փոխկապակցված և փոխլրացնող իրողություններ են:

Բառիմաստային համակարգի զարգացման գործընթացը միշտ էլ հետաքրքրել է լեզվաբաններին:

Հայ լեզվաբանության պատմության մեջ առաջին անգամ նորաբանությունը՝ որպես լեզվական միավոր, հանդիպում է 8-րդ դարի հեղինակ Թեոդորոս Քոթեմա-

¹ Տես Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004, էջ 91:

վորի աշակերտ Յովհաննես Իմաստասեր Օձնեցու «Ատենաբանութիւն ժողովական» (ՆՅԲ, 1, 16) աշխատության մեջ՝ *նորագիւտ բան* արտահայտությամբ: Իմաստասերը, ուսումնասիրելով իր ուսուցչի «Ճառ ընդդէմ Մայրագունացոյն», «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ», «Գովեստ ի սուրբ աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ» աշխատությունները, քննուն է բազմաթիվ նորակազմություններ և դրանք անվանում. «Ձստեղծեալն առ ի քէն *նորագիւտ բանս և իրս...*» (ՆՅԲ, 2, 442):

Յետագայում նորաբանություններին անդրադարձան հայոց լեզվի բառագիտությամբ զբաղվող գրեթէ բոլոր լեզվաբանները. Յ.Աճառյան¹, Մ. Աբեղյան², Ա. Մուրվալյան³, Ս. Ղազարյան⁴, Յ. Կուսիկյան⁵, Ս. Աբրահամյան⁶, Յ. Օհանյան⁷, Ս. Էլոյան⁸, Ս. Գալստյան⁹, Ա. Սուքիասյան¹⁰, Գ. Ջահուկյան¹¹, Լ. Յովսեփյան¹² և այլք: Վերջիններս, տարբեր մոտեցումներով քննելով նորաբանություններն ու նորակազմությունները, առաջադրել են իրենց հեղինակային դասակարգումներն ու սահմանումները:

Կատարված բոլոր ուսումնասիրությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ լեզվի զարգացման բոլոր շրջաններում ստեղծվում են նորաբանություններ:

Նորաբանությունը լեզվաբանական կատեգորիա է, որը տարբեր կերպ է ըմբռնվել տարբեր լեզվաբանների կողմից: Ուսանողներն իրենք էլ պետք է կարողանան ըմբռնել նորաբանության էությունը և հնարավորության դեպքում առաջադրել իրենց սահմանումը: Այդ նպատակով դասին առաջադրվող հիմնական հարցերը պետք է լինեն.

- Որոնք են նորաբանությունները:
- Ինչպես և ինչու են կազմվում նորաբանություններ:

Նորաբանության սահմանմանը նախ պետք է ծանոթանալ հանրագիտարա-

¹ Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957:

² Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Երևան, 1974:

³ Ա. Մուրվալյան, Յայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955:

⁴ Ս. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Երևան, 1955:

⁵ И. Кусикян, Изменение в словарном составе литературного армянского языка советского периода, Москва, 1964:

⁶ Ս. Աբրահամյան, Ներածություն/Յայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:

⁷ Յ. Օհանյան, Բառապաշար/ Յայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:

⁸ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989:

⁹ Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

¹⁰ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982:

¹¹ Գ. Ջահուկյան, Յայոց լեզվի զարգացումը ու կառուցվածքը, Երևան, 1969:

¹² Լ. Յովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:

նային, մասնագիտական և բացատրական բառարաններում¹:

Այնուհետև հարկ է ուսումնասիրել հայ լեզվաբանների առաջարկած սահմանումները, գտնել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Արդեն ծանոթ գիտելիքները կարելի է ամբողջացնել Բյուելի՝ 1991 թ. առաջադրած «Փաստերի բուրգ» մեթոդով: «Էական գիտելիքներ» հատվածում տեղադրել բոլոր հեղինակների կողմից առաջադրվող և ընդունվող հատկանիշները: «Կործաժամկետ փաստեր» հատվածում տեղադրել հեղինակային հատկանիշները: «Օժանդակ մանրամասներ» հատվածում տեղադրել իրողության վերաբերյալ երկրորդական հատկանիշները²:

Միջառարկայական կապերի ամրապնդման նպատակով պետք է հանձնարարել նորաբանության մասին եղած սահմանումները քննել ռուս և անգլերեն լեզվաբանական աշխատություններում³:

Հարցի քննությունից հետո պարզ կդառնա, որ արտասահմանյան լեզվաբանության մեջ կարևորվում է ինչպես նորաբանության արտալեզվական ոճական գործոնը՝ «նորի զգացողությունը», այնպես էլ ժամանակային և լեզվական տարածքի ներլեզվական գործոնները:

Բացի լեզվաբանական ուսումնասիրությունների քննությունից՝ դասի ընթացքում պետք է քննարկվեն բազմաթիվ բառ-նորաբանություններ, ուսանողները պետք է պարզեն, թե նորաբանություն հասկացության ներքո ինչն է նորը:

Գործնական աշխատանքների տեսքում յուրաքանչյուր նորաբանության համար ուսանողները պետք է կազմեն Բյուելի՝ 1999 թ. առաջադրած «Բառի տոհմածառը»: Այսպիսով նրանք կբացահայտեն նորաբանության «նախնի բառը», այսինքն բառի արմատ/ները, դրանց նշանակությունը, ազգական բառերը՝ հոմանիշները: Կքննեն նորաբանության արտասանության բանալին (հատկապես փոխառությունների) և կպարզեն հիշողության ելակետը. (հեղինակային կազմությունների ժամանակ նպատակահարմար է հիշել բնագրային տողը կամ հատվածը): «Համանման բառեր» քայլում պետք է պարզել, թե ինչ տարբերակներ ունի նորաբանությունը⁴:

Լրացնելով բառի հիմնական առանձնահատկությունները՝ պետք է կատարել

¹ Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, *Ստեփանոս Մալխասեանց*, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944:

² Տես Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Չեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004, էջ 244:

³ *Брагина А. А.*, Неологизмы в русском языке, Москва, 1973: Новые слова и словари новых слов/отв. ред. *Котеловой Н.З.*, Л., 1978, *Реформатский А. А.*, Введение в языковедение, 4 изд., М., 1967. *Sapir E.*, “Language”, 1921.

⁴ Տես Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Չեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004, էջ 255:

ամփոփում հետևյալ ենթակետերով.

- Ներկայացնել նորաբանության բնորոշումը՝ բացատրությունը:
- Նորաբանության կիրառության ոլորտը՝ նախադասություն, որի մեջ հանդիպել ենք այդ բառին:
- Գրել նորաբանության համարմատ և տարարմատ հոմանիշները:

Վերոհիշյալ մեթոդի քայլերը զարգացնելով՝ առաջարկում ենք նաև երրորդ փուլը՝ բառի պատմական զարգացումը: Ուսանողները, գտնելով նորաբանությունները, որոշակիացնում են դրանց ժամանակային և տարածական գործոնները, ապա քննում են դրանց կիրառությունները տարբեր ոճի ստեղծագործություններում, պարզում, թե ինչ իմաստափոխությունների է ենթարկվել բառը:

Բազմաթիվ նորաբանությունների քննությունից պարզ կդառնա, որ բոլոր նոր բառերը նույն արժեքն ու կիրառությունը չունեն: Դասի այս փուլում պետք է տեղեկացնել, որ լեզվաբանության մեջ տարբերակվում են նորաբանություն և նորակազմություն (неология, новообразование, neologism, neology, ne'ologisme, ne'ologie) տերմինները:

Լեզվաբանության մեջ նորաբանությունները քննվում են նեղ և լայն առումներով: Նորաբանությունը լայն առումով լեզվում գործառու նոր իրողություն է, իսկ նեղ առումով՝ «լեզվի բառային համակարգի այն նոր միավորն է, որը առաջացել է նոր առարկա անվանելու կամ նոր հասկացություն արտահայտելու հասարակական պահանջումներից և որը գործառու են խոսքում որպես պատրաստի, վերարտադրելի միավոր»¹:

Բառարաններում կատարված ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայերենում **նորաբանություն** բառը բազմիմաստ է և նշանակում է ինչպես գիտություն նորի մասին, այնպես էլ նորակազմություն: Սակայն պետք է հիշել, որ նորաբանության մասնավոր դրսևորումներից են նորակազմությունները, դիպվածային և պոտենցիալ բառերը, էկզոտիզմները՝ տարաշխարհիկ բառերը:

Առանձին դասախոսությամբ պետք է ներկայացնել «դիպվածային բառեր» լեզվաբանական կատեգորիան: Անդրադառնալով դիպվածաբանություն տերմինին՝ այն նույնպես պետք է ուսումնասիրել ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան լեզվաբանության մեջ:

Դիպվածաբանություն տերմինը լայնորեն գործառու է լեզվաբանական գրականության մեջ (անգլ. Occasional word, ֆր. motoccasionnet, գերմ. okkasio-neles Wort, իսպ. palabra ocasional), սակայն այս դեպքում նույնպես դիպվածային բառերի ընդհանրական սահմանում չկա:

¹ Տե՛ս *Виноградов В. В., Словообразование в его отношении к грамматике и лексикологии /Исследования по русскому грамматике, М., 1975:*

Ն. Շանսկին, բնութագրելով բառը, դրա հիմնական առանձնահատկություններից է համարում վերարտադրելիությունը, իսկ քանի որ դիպվածաբանությունները զուրկ են դրանից, ուստի բառեր չեն. «Դրանք բառային ձևաբանականություններ են, որոնք գոյություն ունեն այս կամ այն համատեքստում որպես որոշակի նորմատիվ միավորներ և դրանով իսկ օժտված չեն լեզվական ստանդարտի ցանկացած միավորին բնորոշ հիմնական հատկությամբ՝ վերարտադրելիությամբ»¹:

Հայ լեզվաբանության մեջ դիպվածային և պոտենցիալ բառերի խնդիրն անդրադարձել է Թ. Ղարազյուլյանը՝ դրանք քննելով հայոց լեզվի բառաստեղծական ընդհանուր գործընթացի տեսանկյունից²:

Ուսանողներին հանձնարվում է քննել Թ. Ղարազյուլյանի «Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծական համակարգում» գիտական հոդվածը և մի շարք հեղինակային նորաբանություններ վերլուծել ըստ լեզվաբանի առաջարկած դասակարգումների. նշել, թե առանձնացված նորաբանություններից որոնք են իրենց կազմությամբ համապատասխանում հայերենի բառակազմական կաղապարներին, և որոնք են կազմվում հայերենի բառակազմական կաղապարներին անհամապատասխան ձևերով:

Ա. Մարտիրոսյանը պոտենցիալ և դիպվածային բառերը տարբերակում է՝ ըստ բառակերտման համակարգի. պոտենցիալ բառերը ստեղծվում են արդյունավետ բառակազմական կաղապարներով, իսկ դիպվածայինները՝ նվազ արդյունավետ, անարդյունավետ, դիպվածային կաղապարներով:

Դիպվածային բառերը, ի տարբերություն նորաբանությունների, ածականներ են, երբեմն գոյականներ և բայեր: Հայոց լեզվի տարբեր շրջանների հեղինակային նորակազմությունների կառուցվածքային առանձնահատկությունները ուսումնասիրելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ ինչպես հին և միջին, այնպես էլ ժամանակակից հայերենի բառաստեղծման միտումները անհատական- գնահատողական են. երբեմն էլ բառաստեղծ հեղինակները նպատակ ունեն հարակից բառապաշարի միավորները տեղաշարժելու՝ տվյալ դեպքում գեղարվեստականացնելու: Հայ բառաստեղծ հեղինակների շարքում առանձնանում է Գ. Նարեկացին, որը բառակերտման ասպարեզում նույնպես անկաշկանդ է և սահմանափակումներ չի ճանաչում: Դիպվածային բառերի մեջ ակնհայտ են հանգուցային բառերը, որոնք տարբեր լեզվական կաղապարներում են կիրառվում՝ ստեղծելով նորանոր ածանցումներ, բառաբարդումներ:

Ասվածը պարզ և հասկանալի դարձնելու նպատակով անհրաժեշտ ենք հա-

¹ Տե՛ս *Шанский Н.В.*, Очерки по русскому словообразованию, М., 1968.

² Տե՛ս Թ. Ղարազյուլյան, Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծական համակարգում, ԼՈՂ, է. 7-րդ, Երևան, 1983:

մարում ուսանողներին ներկայացնել Գ. Նարեկացու նորաբանությունների հանգուցային արմատները և նրանցով կազմված նորաբանությունները, ինչպես՝ **բագում – բազմապատկառ, բազմասահ, բազմավտանգ, բազմատխուր, բազմայածեան, բազմատագնապ, բազմաբերանեան, բազմարկածեան, բազմաբոյլ, բազմագթելի, բարի – բարեհռչակեալ, բարեզգեստ, բարեհրաման, բարեպատեհ, բարեշնորհութիւն, ինքն – ինքնաբանական, ինքնաստեղծութիւն, ինքնահարուած, ինքնագրաւ, ինքնաթոյն, ինքնակշտամբելի, ինքնագրաւ, կերպ – ձեւակերպութիւն, անկերպագրելի, կերպառութիւն, կերպաւորել, կերպաւոր, ձեռն – ձեռաստեղծական, ձեռնկալ, ապածեռն, քո – քոյինանիւթ, քոյինակրաւն, քոյինաշունչ, քոյինաստեղծ** և այլն:

Իբրև գործնական առաջադրանք պետք է համծնարարել ժամանակակից հեղինակների նորաբանությունների բացահայտումն ու համեմատումը հիմ, միջնադարյան, վաղ աշխարհաբարյան նորակազմությունների հետ:

20-րդ դարավերջի ռուսաց լեզվի դիպվածային բառակերտման հիմնական միտումների մասին ուշագրավ աշխատության հեղինակ է Ե. Ջենսկայան: <<>>¹ աշխատության ուսումնասիրությունը պետք է կատարել ռուսերեն-հայերեն միջառարկայական դասերի ընթացքում:

Դիպվածային բառակերտման մեջ հատկապես նկատելի է լեզվական միավորների տնտեսման միտումը, որին անդրադառնալիս պետք է անպայման նշել նաև փոխառությունների մասին. փոխառման գործընթացն իրականացվում է հաճախ ոչ թե տվյալ լեզվի համար նոր իրակություններն անվանելու համար, այլ առավել արդյունավետ՝ տնտեսված ձևով արտահայտելու այս կամ այն արդեն հայտնի հասկացությունը: Փոխառությունների ճանապարհով կատարվում է իմաստային վերափոխում՝ շնորհիվ իմաստի խտացման:

Օգտվելով համեմատական լեզվաբանության մեթոդաբանությունից՝ ուսանողներին պետք է համծնարարել բաղդատել արդեն առկա նկարագրական կաղապարները համարժեք փոխառյալ ձևերի հետ, ինչպես՝ դոնոր – մատակարար, չիպս – կարտոֆիլի տապակած շերտիկներ:

Ժամանակակից հայոց լեզվի բառակերտման նոր միջոցները ներկայացրել է Ա. Մարտիրոսյանը իր «Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները»² աշխատության մեջ: Դրանք են՝

ա) անցումը բայական բառույթի վերլուծական կազմություններից համադրականի՝ իրազեկ դարձնել – իրազեկել,

¹ Стен Земская Е.А., Активные процессы современного словопроизводства / Русский язык конца 20 столетия, М., 1966:

² Стен А. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, 2007, էջ 38:

- բ) բառակապակցության բառայնացումը, բնական պաշար – բնապաշար,
 գ) բառակապակցության կրճատումը՝ երթուղային տաքսի – երթուղային,
 դ) բայական բառակապակցությունից գոյական անցումը՝

հետ կանչել – հետկանչ:

Լեզվաբանության մեջ իբրև առանձին իրողություն են դիտվում իմաստային նորաբանությունները, երբ հին բառերին նոր իմաստային որակներ են հաղորդվում:

Հաղորդակցման գործընթացը տնտեսելու նպատակով որևէ հասկացության վերանվանումն իրականացվում է ոչ միայն նոր բառերի, այլև լեզվում արդեն գործառու բառայիններին նոր նշանակություններ հաղորդելու միջոցով: Ռուս լեզվաբան Դ. Շմելյովը իմաստային նորաբանությունները համարում է ներլեզվական հարաբերությունները կանոնավորող, միօրինակություն հաստատող իրողություն, որը ձևականորեն դրսևորվում է «խոսողների կողմից բաղադրյալ անվանումների կրճատմամբ, որոնց մասնատված ձևը հակադրվում է նրանց անվանողական գործառույթի ամբողջականությանն ու միասնականությանը»¹:

Այսպիսով՝ առաջանում են բառ-ծուլություններ², որոնք ըստ էության բառի՝ հասկացության համառոտ ոչ պաշտոնական անվանումն են, ածական + գոյական > ածական, կամ ածական + գոյական + գոյական > ածական բառային հերթագայությամբ, ինչպես՝ երթուղային տաքսի – երթուղային, երկրապահ կամավորների միություն – երկրապահ:

Ուսանողներին պետք է հանձնարարել ժամանակակից խոսակցական և մանուլի լեզվից դուրս գրել բառ-ծուլություններ, պարզել դրանց ներկադապարային առանձնահատկությունները, դրանք համեմատել փոխանունության հետ:

Իմաստային նորաբանությունների առանձնահատկությունների քննությունից հետո ուսանողներին առաջադրվում է կազմել 1985 թ. Քարրի կողմից առաջադրված բառատետր, որտեղ բառախմբերը պետք է դասակարգված լինեն ըստ կատեգորիաների, իմաստային նորաբանությունների համար հատկապես բանալի պետք է հանդիսանա այն արտահայտությունը, որտեղ բառը կիրառվել է նոր իմաստով, այնուհետև պետք է տրվի բառի բնորոշումը (տե՛ս գծապատկեր 4)³:

Նորաբանությունների ուսումնասիրության դասերին ուսանողը պետք է գիտակցի, որ, այնուամենայնիվ, նորաբանությունները բաղադրյալ կազմություններ են, որոնք ունեն կառուցվածքային և ներքերականական առանձնահատկություններ:

Կառուցվածքային առանձնահատկությունների քննությունից հետո պետք է

¹ Стен Шмелев Д.Н., Лексико-семантические изменения в современном русском языке, Русский язык в национальной школе, 1966:

² Стен У. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 42:

³ Стен Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Չեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004, էջ 254:

առանձնացնել բարդությունները և պարզել բաղադրիչ բառերի ներձևաբանական և ներշարահյուսական առանձնահատկությունները: Նորաբանությունները պետք է քննել իբրև համակաղապարային և փոխկաղապարային կազմություններ¹:

Նորաբանությունների մասին կատարված ուսումնասիրություններից հետո պետք է հանգել հետևյալ եզրակացությունների.

Նորաբանությունների ձևավորման մեջ հատկապես կարևոր են արտալեզվական գործոնները: Նորաբանություններ կազմվում են լեզվական հայտնի միավորներով: Նորաբանության հիմքը նախադասության կամ բառակապակցության փոխակերպումն է մի ամբողջական միավորի մեջ: Ե. Լոզենը լեզվի տնտեսման միտումը համարում է ժամանակակից հանրության նախասիրություններից. «...տեքստը կրճատելու միջոցով նրա տեղեկատվական ունակությունը մեծացնելու մշակութային ձգտումը, այնպես էլ տպագիր արտադրանքի տարածքի ու բանավոր հաղորդման տևողության տնտեսման որոշակի իրատեսական ցանկությունը»:

Նորաբանությունների կազմավորման կաղապարները, հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթները բազմազան են ինչպես իրենց բնույթով, այնպես էլ իրենց գործառույթային հատկանիշներով:

Նորաբանությունների կազմավորումը լեզվի բառապաշարային ենթահամակարգի ներսում ընթացող ինքնակա գործընթաց է, որը ուղղված է անվանողական համակարգի կատարելագործմանը: Այն միջնորդավորված է արտաքին հասարակական, գեղարվեստական և անհատական ազդակներով:

Ունենալով նորաբանությունների մասին գիտելիքներ և իմանալով բազմաթիվ նորաբանություններ՝ ուսանողները պետք է ինքնուրույնաբար որոշեն այն միտումները, որոնց հիման վրա նորաբանությունները մուտք են գործում լեզվի անվանողական համակարգ: Այնուհետև այդ ուսումնասիրությունները կարելի է համեմատել Ա Մարտիրոսյանի առաջարկած տեսակետների հետ և գալ համապատասխան ամբողջական եզրակացության:

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 220:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Ս. Արեղյան*, Երկեր, հ. 2, Երևան, 1974:
2. *Ս. Աբրահամյան*, Ներածություն/Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:
3. *Հ. Աճառյան*, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957:
4. *Ս. Գալստյան*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:
5. Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:
6. *Լ. Հովսեփյան*, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:
7. *Թ. Ղարաբյուրյան*, Դիպլոմատիկ և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծական համակարգում, ԼՈՂ, է. 7-րդ, Երևան, 1983:
8. *Ս. Մալխասեանց*, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944:
9. *Ա. Մարտիրոսյան*, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, 2007:
10. *Ա. Մուրվալյան*, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955:
11. *Ս. Ղազարյան*, ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Երևան, 1955:
12. *Լ. Պետրոսյան*, Գրիգոր Նարեկացու «Մատենան»-ի բառային նորաբանությունները, ատենախոսություն, 2010:
13. *Գ. Ջահուկյան*, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 220:
14. *Գ. Ջահուկյան*, Հայոց լեզվի զարգացումը ու կառուցվածքը, Երևան, 1969:
15. *Ա. Սուքիասյան*, ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982:
16. ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1, Երևան, 1969, հ.2, Երևան, 1972, հ.3, Երևան, 1974, հ.4, Երևան, 1980:
17. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004:
18. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979, հ. 2, Երևան, 1981. այսուհետ՝ ՆՀԲ 1/2:
19. *Ս. Էլոյան*, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:
20. *Ս. Էլոյան*, ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989:
21. *Հ. Օհանյան*, Բառապաշար/ Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:
22. *Брагина А.А.*, Неологизмы в русском языке, Москва, 1973:
23. *Виноградов В.В.*, Словообразование в ево отношении к грамматике и лексикологии /Исследования по русском грамматике, М., 1975:
24. *Земская Е.А.*, Активные процессы современного словопроизводства / Русский язык конца 20 столетия, М., 1966:
25. *Е. Ильин*, Психология творчества, креативности, одаренности, Питер; СПб, 2009.
26. *Котеловой Н.З.*, Новые слова и словари новых слов, Л., 1978.
27. *Реформатский А. А.*, Введение в языковедение, 4 изд., М., 1967.

28. *И. Кусикян*, Изменение в словарном составе литературного армянского языка советского периода, Москва, 1964:
29. *Шанский Н.В.*, Очерки по русскому словообразованию, М., 1968.
30. Шмелев Д.Н., Лексико-семантические изменения в современном русском языке, Русский язык в национальной школе, 1966:
31. *Sapir E.*, “Language”, 1921.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ավետիք Իսահակյան, հ. 4, Երևան, 1959:
2. Գրիգոր Նարեկացի, Մատենանոց հրատարակչության, Երևան, 1985:
3. Գրիգոր Նարեկացի, Մատյան հրատարակչության, Գրաբարից թարգմանեց Սկրտիչ Խերանյան, Երևան, 1960:
4. Մատենանոց հրատարակչության, սուրբ Գրիգոր Նարեկացի, Բուհնոս-Այոս, 1948:
5. Գրիգոր Նարեկացի, Մատյան հրատարակչության, Թարգմանությունը Վազգեն Վարդյանի, Երևան, 1979:
6. Հակոբ Պարոնյան, Անհայտ էջեր և աֆորիզմներ, Երևան, 1964:
7. Հովհաննես Շիրազ, Հայոց դանթականը, Երևան, 1991:
8. Պարույր Սևակ, հ. 1, Երևան, 1972:
9. Վահրամ Փափազյան, հ. 4, Երևան, 1983:

МЕТОДОЛОГИЯ ПРЕПОДАВАНИЯ КУРСА “НЕОЛОГИЗМЫ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ”

ՔԱՏՐՈՍՅԱՆ ԼԻԼԻՏ

РЕЗЮМЕ

В статье выявлены методы, способствующие обогащению словарного запаса студентов. Изучая каждый этап развития языка, студент должен отметить стилистические особенности этого периода, оценить словотворчество данной эпохи как реакцию на требования жизни. Предлагаемый спец курс подводит студентов к изучению сло-вообразования неологизмов с точки зрения их структуры и грамматических особенностей.

THE METHODOLOGY OF THE COURSE “NEUOLOGISMS IN ARMENIAN”

LILIT PETROSYAN

SUMMARY

The article reveals the methods of enriching students active vocabulary. Dealing with each period the student must possess background knowledge of the linguo-stylistic peculiarities typical of that very period. While analysing neologisms the student must know that they are complex formations which have certain structural and grammatical peculiarities.